



ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 909, ֆաքս՝ (374 10) 540 613
Էլ. փոստ scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan0010, Armenia
Tel.: (374 10) 540 909, fax: (374 10) 540 613
E-mail: scws@scws.am

<<ՕՂ>> Տարբեր 2022թ. N 01/08/ԿՑԳ-2022

Ձեր _____ 2022թ. N _____

<<Հետաքննող լրագրողներ>> ՀԿ
<<Հետք>> թերթի լրագրող
տիկին ՌԻՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
Էլ. փոստ: info@hetq.am, hetq@hetq.am

Հարգելի տիկին Գրիգորյան

Ի պատասխան Ձրային կոմիտեին ուղղված Ձեր 21.02.2022թ. գրության՝ Աերացիա նոր մաքրման կայանի առնչությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ տեղեկացնում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունների միջև 2008 թվականի մայիսի 27-ին ստորագրված Երևանի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակում «ՍԱԴԵ» ԶԱԳԸ ֆրանսիական ընկերության հետ 2014 թվականի դեկտեմբերի 30-ին կնքվել է «Աերացիա ԿՄԿ վերականգնման աշխատանքներ» (N ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/3) պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): 2017-2019թթ. ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա <<Աերացիա>> ԿՄԿ-ի շինարարության <<Ծրագրի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկները լուծարվել են, իսկ FIDIC RED BOOK դասի Պայմանագիրը դեռևս անավարտ է՝ Պայմանագրի արդյունքում սահմանված կարգով պետական գրանցում ստացած գույքի բացակայությամբ պայմանավորված:

Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի Ջրային կոմիտեն հանդիսանում է ջրային համակարգերի կառավարման մարմին և պատասխանատու է ջրամատակարարման և

ջրահեռացման կազմակերպման, ջրային համակարգերի կառավարման, դրանց անվտանգության ապահովման և պահպանության համար: Հաշվի առնելով ջրային համակարգի մաս կազմող «Աերացիա» ԿՄԿ անվամբ պետական գրանցում ստացած գույքի բացակայությունը, Ջրային կոմիտեն դե յուրե չէր կարող ներգրավված լինել կայանի գործարկման և շահագործման գործընթացում: Այնուամենայնիվ, որպես պետական լիազոր մարմին Ջրային կոմիտեն 2017-2018 թվականներին բանակցություններ է վարել հանրապետության միակ օպերատոր հանդիսացող «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ՝ ուղղված նոր կառուցվածքների գործարկմանը և ընդհանուր առմամբ, կայանի շահագործման կազմակերպմանը: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից ստացված շահագործման ծախսերի նախնական գնահատականը կազմել է տարեկան շուրջ 1.4 մլրդ դրամ:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ բանակցությունները վերջնական փուլ չեն մտել:


2. Ձեր գրությամբ նշված միջազգային մասնագիտացված ընկերություններից մի քանիսի հետ Ջրային կոմիտեն կնքել է համատեղ հետազա գործունեության համաձայնագրեր, որոնցից միայն մեկ բաղադրիչն է ուղղված եղել «Աերացիա» ԿՄԿ-ի շահագործմանը: Հաշվի առնելով 1-ին կետում նշված հանգամանքը, որը վերաբերում է Պայմանագրի շրջանակներում կառուցված կեղտաջրի մաքրման և տիղմի ջրազրկման նոր կառուցվածքների պետական գրանցման բացակայությանը, անհնար է «Ջրային օրենսգրքի 49-րդ հոդվածում նշված եղանակներից որևէ մեկով **ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցումը**:

3. Հաշվի առնելով 1-ին կետում նշված Պայմանագրի անավարտ լինելու հանգամանքը, որևէ ընկերության կողմից շահագործման ստանձնելու վերաբերյալ չենք կարող տեղեկություն տրամադրել: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ջրային կոմիտեի կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ««Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման ծրագրի պայմանագիրն ավարտելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման պարագայում Ջրային կոմիտեն հնարավորություն կստանա քայլեր ձեռնարկել ուղղված կայանի գործարկման աշխատանքներին:

4. Քանի որ, ինչպես վերը նշվեց, որ Ջրային կոմիտեն հանդիսանում է ջրային համակարգերի կառավարման մարմին, իսկ հետագա շահագործման գործընթացի

ապահովման նպատակով վերապատրաստվող անձնակազմի տրամադրումը համաձայն Պայմանագրի տեխնիկական մասնագրերի, հանդիսանում է պատվիրատուի գործառույթը, որը Ջրային կոմիտեն երբևէ չի իրականացրել: Հետևաբար, կարծում ենք այս հարցով կապալառուն պետք է դիմեր ոչ թե Ջրային կոմիտեին, այլ Պայմանագրի պատվիրատուին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

 Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN VAHAGN 1812750064

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

համակարգերի վարչություն
/010/54-06-33